



Կարգապահական գործ թիվ 19069

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հուլիսի 30-ի թիվ 170-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/111-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՎԱՀԵ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարապետ Աղաջանյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Վահե Դանիելյանի (արտոնագիր՝ 2080) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

14.02.2019թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ նաև՝ Պալատ**) է մուտքագրվել Վարդան Առաքելյանի և Ջուլիետա Վարդանյանի (**այսուհետ նաև՝ Դիմողներ կամ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է հետևյալը:

Դիմողների և Լյուսյա Գյուրջյանի միջև առկա է վեճ փոխառության պայմանագրի չկատարման վերաբերյալ: Լյուսյա Գյուրջյանի ներկայացուցիչ Վահե Դանիելյանը Դիմողներին ուղարկել է 4 հատ դատարկ ծրար:

Դիմողները պնդում են, որ փաստաբան Վահե Դանիելյանի նշված վարքագիծն ուղղված է դատական գործի ձգձգմանը և իրենից ներկայացնում է փաստաբանին ոչ հարիր վարքագիծ, խնդրել են հարուցել կարգապահական վարույթ և փաստաբան Վահե Դանիելյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի կողմից 14.03.2019թ. թիվ 122-Ա/ԿԳ-19069 որոշմամբ (**այսուհետ նաև՝ Որոշում**)՝ փաստաբան Վահե Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 2080) նկատմամբ հարուցվել է կարգապահական

վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրիք**) 2.2.3. ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

Կարգապահական գործը 18.03.2019թ. հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ փաստաբան Արմեն Սիմոնյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողների համառոտ բացատրությունները.

Խորհրդի նիստին Դիմող Վարդան Առաքելյանը պնդել է դիմումում նշված հանգամանքները, ինչպես նաև ընդունել է, որ սնանկության գործով 15.02.2019թ. դատարանին հայտնել է, որ ստացել և կարդացել է առարկությունը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

22.02.2019թ. Պալատ է մուտքագրվել Պատասխանող Վահե Դանիելյանի բացատրությունը, որում Պատասխանողը հայտնել է, որ ներկայացրել է Լյուսյա Գյուրջյանի շահերն ընդդեմ Դիմողների՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու պահանջով, ինչպես նաև սնանկության գործով, որտեղ ևս նշված անձինք հանդիսանում են դատավարության կողմեր: Նշված գործերից առաջինով Պատասխանողը կազմել է հայցադիմում, իսկ երկրորդով՝ առարկություն, որից հետո դրանք փոխանցել է իր վստահորդ Լյուսյա Գյուրջյանին ծանոթանալու և ապա փոստով Դիմողներին ուղարկելու համար: Նամակների վրա որպես ուղարկող նշված է եղել Պատասխանողի անունը: Լյուսյա Գյուրջյանը Պատասխանողին հայտնել է, որ նամակներն ուղարկվել են:

Պատասխանողը պնդել է, որ դիմումն ամբողջությամբ անհիմն է, զուրկ որևէ փաստական և իրավական հիմնավորումից, քանի որ իր վստահորդի կողմից նամակները պատշաճ ուղարկվել են Դիմողներին, ինչպես նաև Դիմող Վարդան Առաքելյանը սնանկության գործով 15.02.2019թ. դատական նիստում հայտնել է, որ ստացել և կարդացել է առարկությունը:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Նախապատրաստողը 17.05.2019թ. կազմել է եզրակացություն, որի համաձայն՝ հաստատված են համարվել հետևյալ փաստերը:

- ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Աթաբեկյանի վարույթում է գտնվել թիվ ԵԴ/0903/04/18 սնանկության գործը՝ ըստ դիմումի Վարդան Առաքելյանն ու Ջուլիետա Վարդգեսյանն ընդդեմ Լյուսյա Գյուրջյանի՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջով, իսկ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ 2474/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Լյուսյա Գյուրջյանն ընդդեմ Վարդան Առաքելյանի և Ջուլիետա Վարդգեսյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և գույքն արգելանքից հանելու պահանջի մասին:

- Նշված երկու գործերով Լյուսյա Գյուրջյանի շահերը ներկայացնում է Պատասխանող Վահե Դանիելյանը:

- Նշված երկու գործերով առկա են համապատասխան դատական ակտեր, որոնք կայացվել են գործի հանգամանքների մասին իրազեկված կողմերի մասնակցությամբ:

- Պատասխանողի և նրա վստահորդի Լյուսյա Գյուրջյանի բացատրություններից ակհայտ է, որ Դիմողներ Վարդան Առաքելյանին ու Ջուլիետա Վարդգեսյանին փոստի միջոցով ուղարկվել է 4 ծրար, որոնց վրա տպագրված է Պատասխանող Վահե Դանիելյանի անուն-ազգանունը, հասցեն, իսկ ներքևի աջ անկյունում ձեռագիր գրված են Դիմողներ Վարդան Առաքելյանի և Ջուլիետա Վարդգեսյանի հասցեները և նրանց անուն-ազգանունները: Նշված նկարագիրը համընկնում է Դիմողների կողմից դիմումին կից ներկայացված 4 ծրարների նկարագրին:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.05.2019թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 30.07.2019թ. ժամը 18:30-ին, Պալատի վարչական շենքի՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ թիվ 12 սենյակում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

- ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Աթաբեկյանի վարույթում է գտնվել թիվ ԵԴ/0903/04/18 սնանկության գործը՝ ըստ դիմումի Վարդան Առաքելյանի ու Ջուլիետա Վարդգեսյանի ընդդեմ Լյուսյա Գյուրջյանի՝ վերջինիս սնանկ ճանաչելու պահանջով, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում է գտնվում թիվ ԵԴ 2474/02/19 քաղաքացիական գործն ըստ հայցի Լյուսյա Գյուրջյանի ընդդեմ Վարդան Առաքելյանի և Ջուլիետա Վարդգեսյանի՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու և գույքն արգելանքից հանելու պահանջի մասին:

- Նշված երկու գործերով Լյուսյա Գյուրջյանի շահերը ներկայացրել է Պատասխանող Վահե Դանիելյանը:

- Դատական նիստում Դիմող Վարդան Առաքելյանը դատարանին հայտնել է, որ առարկությունը ստացել է և այն կարդացել է:

- Վարդան Առաքելյանին ու Ջուլիետա Վարդգեսյանին փոստի միջոցով ուղարկվել է 4 ծրար, որոնց վրա տպագրված է Պատասխանող Վահե Դանիելյանի անուն-ազգանունը, հասցեն, իսկ ներքևի աջ անկյունում ձեռագիր գրված են Դիմողներ Վարդան Առաքելյանի և Ջուլիետա Վարդգեսյանի հասցեները և նրանց անուն-ազգանունները: Նշված նկարագիրը համընկնում է Դիմողների կողմից դիմումին կից ներկայացված 4 ծրարների նկարագրին:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ Դիմողների և Պատասխանողի բացատրություններով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վահե Դանիելյանը փաստաբան է հանդիսանում 30.04.2016թ., և 2016-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 1 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, որը Պալատի խորհրդի 16.05.2017թ. թիվ ԿԳ/52-Ա որոշմամբ կարճվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Վահե Դանիելյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Նշված կանոնից հետևում է, որ փաստաբանը մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեության ընթացքում չպետք է կատարի այնպիսի արարք, որը կարող է վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:

Կանոնագրքի 1.1 ենթակետը նախանշում է նաև փաստաբանի դերը հասարակության մեջ, մասնավորապես՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հարույկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ երբեմն իրար հակասող՝

- վստահորդի նկատմամբ,
- դատարանների և այլ իրավապահ մարմինների առաջ, որտեղ փաստաբանը

պաշտպանում է գործը և հանդես է գալիս վստահորդի անունից;

- իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես;

- հասարակության նկատմամբ, որի համար ազատ և անկախ մասնագիտության առկայությունը՝ համակցված այդ մասնագիտությանը վերաբերող կանոնների նկատմամբ հարգանքով, Մարդու իրավունքների պաշտպանության կարևոր միջոց է՝ ի նպաստ Հայաստանի Հանրապետության հզորության և հասարակության այլ շահերի:

Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից անուղղակի նույնացվում է փաստաբանական համայնքի հետ, ուստի՝ փաստաբանն իր մասնագիտական, հասարակական և հրապարակախոսական գործունեության իրականացման ընթացքում պետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է:

Դիմողները նշել են, որ Պատասխանողի կողմից Դիմողներին է ուղարկվել է դատարկ՝ առանց համապատասխան դատավարական փաստաթղթերի ծրարներ: Ըստ Պատասխանողի ինքը կազմել է հայցադիմում և առարկություն, որից հետո դրանք փոխանցել է իր վստահորդ Լյուսյա Գյուրջյանին ծանոթանալու և փոստով Դիմողներին ուղարկելու համար: Նամակների վրա որպես ուղարկող նշված է եղել Պատասխանողի անունը: Լյուսյա Գյուրջյանը Պատասխանողին հայտնել է, որ նամակներն ուղարկվել են:

Պատասխանողի կողմից Կանոնագրքի պահանջների խախտում թույլ տալու փաստը վկայակոչել և ներկայացրել է Դիմողները: Նման խախտումը կարող է իրականության մեջ օբյեկտիվորեն տեղ գտած լինել, դրանք հնարավոր են և ենթակա են ապացուցման, և համաձայն **Կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի**, առ այն, որ Կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, ապացուցելու պարտականությունը կրում է փաստը վկայակոչած Դիմողները:

Կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի՝ *Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը, տվյալ դեպքում Դիմողը:*

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:*

Խորհրդի տրամադրության տակ առկա են Դիմողների ու Պատասխանողի իրարամերժ դիրքորոշումներն արտահայտող բացատրությունները և Խորհուրդը գտնում է, որ կարգապահական վարույթի ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնք հաստատեն փաստաբան Վահե Դանիելյանի կողմից Դիմողներին դատարկ՝ առանց համապատասխան դատավարական փաստաթղթերի ծրարների ուղարկման հանգամանքը, այն է՝ չի հիմնավորվել, որ նշյալ ծրարներն իրականում դատարկ են եղել, ինչպես նաև եթե անգամ դատարկ են եղել, որ դրանք ուղարկվել են Պատասխանողի կողմից:

Միաժամանակ Խորհուրդը հատկանշական է համարում այն հանգամանքը, որ

Դիմող Վարդան Առաքելյանը Պալատի խորհրդի նիստում ընդունել է, որ դատական նիստի ընթացքում դատարանին հայտնել է, որ առարկությունը ստացել է և այն կարդացել է: Խորհուրդն արձանագրում է նաև, որ բոլոր դեպքերում Դիմողներն ունեցել են հնարավորություն դատարանից պահանջել և ստանալ համապատասխան դատավարական փաստաթղթերը, որոնք իրենց պետք է ուղարկեր Պատասխանողը:

Վերոնշվածի հաշվառմամբ Պալատի խորհուրդը գտնում է, որ պատասխանողի նկատմամբ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթն ենթակա է կարճման՝ վերջինիս կողմից նշված կետով նախատեսված խախտման կատարումն ապացուցված չլինելու պատճառաբանությամբ:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վահե Դանիելյանի (արտոնագիր թիվ 2080) նկատմամբ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-19069 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարապետ Աղաջանյան

**30 հուլիսի 2019թ.
թիվ ԿԳ/111-Ա
ք. Երևան**